

ասիկա շատ մակերեսային կերպով մը, ըսելով թէ երկիրը տարուան ամէն եղանակներուն դաւար է, պտղաւէտ և պտղառատ (128—130), բայց չունի այս մասին մանրամասնութիւններ, որոնք արժեւորեն իր խօսքերը: Ագոնց, որ օգտուած ըլլալ կը թուի Հ. Թոմաճանի ուղեգրութենէն, կը հաստատէ թէ դաշտային վայրերը արգաւանդ են և բարեբեր, բայց բընակիչներու ծուլութեան պատճառով կը մնան անմըշակ. իբր ինքնաբոյս բերքեր կը յիշէ կոճապղպեղ (զեմեքիլ), գարտամոմոն, նարնջենին, կիտրենին, լիմոնենին և այլ պտղաբեր ու մեզի անծանօթ ծառեր, որոնց պտուղները դեղութիւն են թունաւոր օձերու խայթուածներուն դէմ, ինչպէս աստաղոյշ կոչուած պտուղը և ամատմակտա կոչուածը որ կը բուժէ կոտորած ոսկորները (Ագոնց, էջ 527-8):

Նոյնպէս ան կը խօսի հապէշական խահվէին վրայ, զոր Եմէնի սուրճէն գերազանց կը ներկայացընէ, իր խոշոր հատիկներուն և իւղին պատճառով (էջ 524): Կ'ըսէ նաև, թէ Հապէշիստան ունի գարի և կորեակ, բայց կը հերքէ Պիշինկի հաւաստումը, թէ ան բրինձ ալ կ'արտադրէ: Ագոնց կը ծանշանայ հունատի մը վրայ, դէՖ կոչուած, որ մանրէ միկոնէն, բայց անկէ երկայն. Հապէշները հաց կը չինէին անկէ:

Այս կարեւոր տեղեկութիւններուն հետ՝ Թիւթիւնճի կու տայ անիրական մի քանի տեղեկութիւններ ալ, որոնք անտեղի չափազանցութիւններ են, ինչպէս Փիլլայի զանգակատան բարձրութեամբ ծառին պատմութիւնը (138—140), հարիւր տարի ապրող և բոլոր տարին պտուղ տուող ընկուզի ծառի պէս մեծ բամպակի ծառը (144—146) և 2 լիդր կշիռով դեղձ տուող ծառերը (146—148):